

Քաղաքացի՝ Նարեկ Քաջիկի Բաղայանին
Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի 52/4 28,
անձնագիր AN0501061
ՀՎՀՀ՝ 28021202

Ծանուցագիր

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության կողմից ստացված օտարված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունների Ձեր կողմից

1. 08/01/2020թ. օտարվել է 08/01/2020թ. ձեռք բերված MAZDA 3 2.0L մոդելի 2005թ. արտադրության 150 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը,

2. 22/01/2020թ. օտարվել է 22/01/2020թ. ձեռք բերված BMW 525 I մոդելի 2004թ. արտադրության 192 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը,

3. 30/01/2020թ. օտարվել է 08/01/2020թ. ձեռք բերված BMW 530 I մոդելի 2006թ. արտադրության 258 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը,

4. 18/05/2020թ. օտարվել է 18/05/2020թ. ձեռք բերված CHEVROLET CRUZE 1.4 մոդելի 2012թ. արտադրության 138 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը,

5. 26/08/2020թ. օտարվել է 26/08/2020թ. ձեռք բերված BMW 530 XI մոդելի 2007թ. արտադրության 258 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը,

6. 01/09/2020թ. օտարվել է 01/09/2020թ. ձեռք բերված HYUNDAI ELANTRA 2.0 I մոդելի 2007թ. արտադրության 138 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում: Ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով ֆիզիկական անձը եկամտային հարկը հաշվարկում է ինքնուրույնաբար Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված դրույքաչափով:

Համաձայն հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ թիվ N 34113/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության ֆիզիկական անձի պարտավորությունը 26.08.2021թ. դրությամբ կազմել է 178.809 դրամ, որից հարկ՝ 170.100 դրամ, տույժ՝ 8.709 դրամ:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Դուք սույն ծանուցագիրը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին հրավիրվում եք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի՝ ք. Երևան, Ս. Դավթի 87Ա հասցեով՝ վարչական վարույթի նախնական լսումներին մասնակցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ձեր չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների առաջարկում ենք եռօրյա ժամկետում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները:

ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության

հարկադիր գանձման և պարտավորությունների

կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Նանանյան

հեռ.010 309191 (9107)

26.01.2022թ.